Հաստատում եմ՝
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտոր Դ. Գյուրջինյան
«Հունիսի 12», 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Սվետլանա Կամոյի Ջիլավյանի «Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմնական մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում» թեմայով ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ՄՀՔ ֆակուլտետի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի 2026թ. հունիսի 11-ի նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչի ժ/պ, փ.գ.թ., ա.գ.թ., դոցենտ Վարդան Ասլանյանը, ի.գ.դ., ք.գ.թ. Արմեն Հարությունյանը, փ.գ.թ., դոցենտ Գևորգ Հակոբյանը, ք.գ.թ., դոցենտ Նարեկ Գրիգորյանը, ք.գ.թ., դոցենտ Մարգարիտ Պետրոսյանը, պ.գ.թ., ավագ դասախոս Գեորգի Միրզաբեկյանը, պ.գ.թ., ավագ դասախոս Արմեն Պետրոսյանը, բ.գ.թ., ավագ դասախոս Վահե Առաքելյանը, ավագ դասախոս Լուսինե Պողոսյանը:

Նիստի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, դրված էր Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 056 մասնագիտական խորհրդին հրապարակային պաշտպանության ներկայացված Սվետլանա Կամոյի Ջիլավյանի «Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմնական մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում» թեմայով ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության քննարկումը:

Նիստի ընթացքում ելույթ ունեցավ ատենախոսության գրախոս ք.գ.թ., դոցենտ Մարգարիտ Պետրոսյանը՝ ներկայացնելով նաև իր գրավոր կարծիքը: Ատենախոսության վերաբերյալ ելույթ ունեցան նաև Ա. Հարությունյանը, Ա. Պետրոսյանը, Գ. Միրզաբեկյանը, Վ. Առաքելյանը, Լ. Պողոսյանը:

Սվետլանա Կամոյի Ջիլավյանի «Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմնական մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում և

Ռուսաստանի Դաշնությունում» թեմայով ատենախոսության քննարկման արդյունքում նիստի մասնակիցները ներկայացրին հետևյալ դիտարկումները և նկատառումները.

Զինված ուժերի դերն ու նշանակությունը պետության անվտանգության և բնականոն կենսագործունեության ապահովման գործում էականորեն աճել է, ինչը պայմանավորված է ժամանակակից փուլում աշխարհաքաղաքական սրընթաց վայրիվերումներով, անվտանգային տեղային և համաշխարհային ճգնաժամերի աննախադեպ ակտիվացմամբ, ինչպես նաև ոչ ավանդական՝ անհամաչափ, իմացական, հիբրիդային սպառնալիքների ի հայտ գալով: Հատկանշական է, որ ռազմական գործոնի ակտիվացմանը զուգահեռ կայուն պետականության և ազգային անվտանգության երաշխավորման արդյունավետությունը մեծապես պայմանավորվում է քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների փոխլրացնող ու շարունակական գործառնությամբ:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրինակով այս մեխանիզմների համեմատական վերլուծության արդիականությունն ու կարևորությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախևառաջ, երկու դեպքերում էլ խիստ արդիական է անվտանգային ճգնաժամերի և դրանց հաշվառմամբ ռազմական բարեփոխումների հրամայականը: ՀՀ պարագայում ազդող գործոններից էին 2020 թվականի 44-օրյա պատերազմը, դրան հաջորդած սահմանային բախումների դեպքերը, ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ ոտնձգությունները, որոնք առաջնային պլան մղեցին անվտանգային համակարգի արմատական վերակառուցման հարցերը: Բարեփոխումների առանցքում պետք է լինեին նաև թափանցիկության, հաշվետվողականության, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման հետ կապված հարցեր, որոնք իրապես իրագործելի են միայն քաղաքացիական վերահսկողության գործիքների միջոցով:

Ռուսաստանի Դաշնության պարագայում ազդեցիկ գործոնների շարքում առաջինը ուկրաինական հակամարտությունն է և Արևմուտքի հետ առճակատումը: Այս խնդիրները ստիպեցին ՌԴ ռազմաքաղաքական ղեկավարությանը ամբողջապես վերանայել Զինված ուժերի կառավարման համակարգը, ինչն էլ, հանգեցրեց ԶՈՒ ռազմաարդյունաբերական համալիրի նկատմամբ խիստ վերահսկողության սահմանման:

ԶՈՒ նկատմամբ քաղաքացիական վերահսկողության վրա առանցքային ազդեցություն ունեցող գործոնների մեկն էլ սահմանադրաիրավական և ինստիտուցիոնալ մոդելների կերպափոխման գործընթացն է, մասնավորապես, երկու պետությունների կառավարման մոդելի տարբերությունները, ԶՈՒ նկատմամբ վերահսկողության գործիքակազմերը և այլն:

Բավական արդիական է նաև քաղաքացիական և ռազմական հարաբերությունների հավասարակշռության հարցը, այդ թվում՝ ռազմական դրության պայմաններում կամ ճգնաժամային այլ իրավիճակներում ժողովրդավարական ընթացակարգերի սահմանափակվածության հարցը: Այս պարագայում հիմնական

հարցը վերաբերում է որոշումների կայացման օպերատիվության վրա ունեցած ազդեցության սահմանափակմանը և հանրային հաշվետվողականության մեխանիզմների անխափան աշխատանքի երաշխավորմանը:

Ավելին, այս ոլորտում առկա խնդիրների առանցքում անվտանգության դեմ ուղղված գոյութենական սպառնալիքների պայմաններում արդյունավետ, համապարփակ կառավարման ու ժողովրդավարական հաշվետվողականության սահմանադրական սկզբունքների ներդաշնակման հրամայականն է՝ որպես դիմակայունության բարձրացման ու ամրապնդման նախապայման: Այս առումով, Սվետլանա Ջիլավյանի աշխատանքի թեման և այդ ուղղությամբ կատարված հետազոտություններն ունեն նաև տեսական-հայեցակարգային և իրավական կարևորագույն նշանակություն:

Թեկնածուական ատենախոսության «Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմնական մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում» վերնագիրն ամբողջապես համապատասխանում է դրա բովանդակությանը և իրականացված հետազոտության բնույթին: Հետազոտության վարկածը, հիմնական նպատակներն ու խնդիրները, աղբյուրների տեսությունը, թեմայի գիտական ուսումնասիրվածության աստիճանը և գիտական նորույթն ու գործնական նշանակությունը հստակ են ձևակերպված:

Ատենախոսությունն աչքի է ընկնում գիտական նորույթով, մասնավորապես՝

1. Գնահատվել և համադրվել են Հայաստանի Հանրապետության խորհրդարանական և Ռուսաստանի Դաշնության նախագահական կառավարման ձևերը՝ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացների առանձնահատկությունների հաշվառմամբ: Մասնավորապես, ՌԴ-ում կենտրոնացված որոշումների և տեղեկատվության սահմանափակ լինելու հանգամանքը հաշվի առնելով առաջարկվել է բազմաստիճան համակարգի նոր հայեցակարգ, որը ենթադրում է տեղային մակարդակում անվտանգային մարմինների լիազորությունների ընդլայնում և թափանցիկության բարձրացում դաշնային մակարդակում՝ հաշվի առնելով ՀՀ-ում խորհրդարանական վերահսկողության առկա փորձն ու միջազգային պրակտիկան:
2. Առաջարկվել է ներդնել ռազմական օմբուդսմենի ինստիտուտ՝ որպես երկու պետություններում զինծառայողների իրավունքների պաշտպանության նորարարական մեխանիզմ: ՀՀ համար բոլորովին նոր կառույց և գործառույթների սահմանում ենթադրող գործընթաց է, իսկ ՌԴ պարագայում նախատեսվում է ներդնել փուլային տարբերակ՝ նախ ընդլայնելով գործող օմբուդսմենի լիազորությունները ԶՈՒ հետ կապված գործերում:
3. Վերլուծվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դերը՝ որպես ԶՈՒ նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ձևաչափ: Բացի այդ, աշխատանքում նաև հիմնավորվել է, որ ՄԻՊ-ը ոչ միայն իրավապաշտպան

մարմին է, այլև կարևորագույն դերակատար անվտանգային համակարգում ռազմավարական քաղաքականության ձևավորման գործում:

4. Ներկայացվել են քաղաքացիական վերահսկողության նոր սահմանումներ՝ լայն և նեղ ընդգրկմամբ: Սահմանումների ձևակերպման հարցում առաջարկվել են մի շարք բարեփոխումներ, որոնք ուղղված են ՀՀ պաշտպանական համակարգի խնդիրների կարգավորման նպատակին: Այս համատեքստում կարևորագույն նշանակություն ունեն խորհրդարանական վերահսկողության ընդլայնման հնարավորություններն ու ոչ կառավարական կազմակերպությունների դերը:

Աշխատանքի կառուցվածքի և բովանդակության ակնարկ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (ութ ենթագլուխներից), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության մեթոդները, տեսական և գործնական նշանակությունը: Ներկայացվել են աշխատանքի գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության **առաջին**՝ «Բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը բազմամակարդակ անվտանգության ամրապնդման գործոն» վերտառությամբ գլխում քննարկվում են բանակի՝ որպես հանրային կառավարման և քաղաքական ինստիտուտի դերը և նշանակությունը, բանակ, իրավական պետություն և քաղաքացիական հասարակության փոխազդեցության հիմնական մեխանիզմները: Այս գլխում ներկայացվում են նաև բանակի արտաքին և ներքին գործառույթները, որոնք նպատակաուղղված են պետության սահմանների անձեռնմխելիության պահպանմանը, արտաքին սպառնալիքներին դիմագրավմանը, քաղաքական կայունության և սահմանադրական կարգի պահպանմանը:

«Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության համակարգի ձևավորման նախադրյալները ՀՀ-ում» վերնագրով **երկրորդ** գլխում նախ ներկայացվում է այն իրավական շրջանակը, որը կարգավորում է ԶՈՒ նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմնական մեխանիզմները, ապա նաև ՀՀ պաշտպանական ոլորտում առկա բազմաբնույթ խնդիրներն ու դրանց լուծման հնարավորությունները: Քննարկվում են նաև ՀՀ ԶՈՒ նկատմամբ քաղաքացիական վերահսկողության համակարգի մաս կազմող ինստիտուտներն ու դրանց գործառույթների շրջանակները՝ խնդիրների և հնարավորությունների հաշվառմամբ:

Թեկնածուական ատենախոսության **երրորդ**՝ «ՌԴ և ՀՀ զինված ուժերում քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները բազմամակարդակ անվտանգության համակարգի ստեղծման համատեստում» վերնագրով գլխում նախ ներկայացվում են ՌԴ-ում բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնող հիմնական ինստիտուտները, ընթացակարգերը, վերլուծվում են պաշտպանական և անվտանգային ոլորտը կարգավորող հիմնական իրավական

ակտերը: Այս գլխում իրականացվել է նաև ՀՀ և ՌԴ քաղաքացիական վերահսկողության համակարգերի համեմատական վերլուծություն, որը թույլ է տվել պարզել, որ ՀՀ-ում խորհրդարանական մոդելի ներդրմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմներն առավել բաց և թափանցիկ են դարձել, իսկ ՌԴ-ում, նախագահական կառավարման մոդելով պայմանավորված, գերակշռում է կենտրոնացված և գործադիր իշխանության վրա հիմնված վերահսկողական համակարգը:

Եզրակացություններում ամփոփվում են սույն հետազոտության ընթացքում ստացված հիմնարար արդյունքներն ու դրանցից բխող հիմնադրույթները:

Արդյունքների հիմնավորվածությունը և գիտական արժեքը

Թեկնածուական ատենախոսությունում առկա են հեղինակ Ս. Ջիլավյանի կողմից կատարված եզրակացություններ և գործնական առաջարկներ, այն ունի հստակ գիտատեսական և կիրառական նշանակություն, հարստացնում է քաղաքացիական վերահսկողության մեխանիզմներին վերաբերող ուսումնասիրությունների խնդրային ու առարկայական դաշտը: Ատենախոսության առանձին դրույթներ կարող են կիրառվել անվտանգային և վերահսկողական ոլորտում օրակարգերի մշակման, ռազմական և քաղաքական կառավարման մարտավարությունների արդիականացման գործընթացում:

Օգտագործվել է բավականաչափ աղբյուրաբանական և գիտական հենք: Հետազոտությունը միջառարկայական բնույթ է կրում, ինչն արտացոլվում է նաև ուսումնասիրության հիմքում ընկած մեթոդաբանության մեջ: Ատենախոսը օգտագործել է համակարգային, համեմատական և պատմահրավական մեթոդներ, կատարել արխիվային փաստաթղթերի վերլուծություն և առանձին դեպքերի ուսումնասիրություն: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության տեքստին: Ատենախոսն ունի թվով 12 գիտական հոդված, որոնցում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Մեկնաբանություններ և նկատառումներ

Այնուհանդերձ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ատենախոսությունը ավելի կշահեր, եթե հեղինակը նկատի ունենար առաջարկվող հետևյալ դիտարկումները՝

1. Աշխատանքի էական մեթոդաբանական բացթողումներից է այն, որ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների համեմատական վերլուծություն իրականացվել է բացառապես հետխորհրդային երկու պետությունների՝ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև: Ցանկալի կլիներ առաջատար փորձի հաշվառումը և համեմատության իրականացումը արևմտյան կայացած ժողովրդավարական ավանդույթներ և ԶՈՒ նկատմամբ քաղաքացիական վերահսկողության դասական և արդյունավետ մոդելներ ունեցող որևէ այլ պետության հետ (օրինակ, ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա, Ֆինլանդիա այլն): Հետազոտության արդյունքներն առավել կիրառական կլինեին ՀՀ-ի համար, եթե ընտրվեր խորհրդարանական կառավարման մոդել ունեցող պետություն: Կարծում ենք, որ և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Ռուսաստանի

Դաշնությունը խորհրդային ռազմական համակարգի ժառանգորդներ հանդիսանալով բախվում են անցումային շրջանի խնդիրների հետ, այդ իսկ պատճառով նրանց միջև համեմատությունը թույլ չի տալիս հստակորեն գնահատել, թե որքանով են ՀՀ զարգացումներն այդ ոլորտում համապատասխանում ժողովրդավարական վերահսկողության միջազգայնորեն ճանաչված արդյունավետ չափանիշներին:

2. Աշխատանքում զինված ուժերում քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների քննարկման շրջանակներում հեղինակն անդրադառնում է պաշտպանական ոլորտում կոռուպցիոն խնդիրներին, գենդերային հավասարության հարցերին, հաշվետվողականության մեծացմանը և այլ հարցերի, սակայն անդրադարձ չկա այս և նման այլ խնդիրներով զբաղվող մասնագիտացված ստորաբաժանմանը, որը գործում է Պաշտպանության նախարարության համակարգում՝ ՀՀ ՊՆ Մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնին և դրա գործունեությանը: Կենտրոնի ուշադրության առանցքում բոլոր վերոշարադրյալ խնդիրներն են և դրանց համապարփակ լուծումը:

3. Ատենախոսն անդրադարձել է Պաշտպանության նախարարության կողմից իրականացվող մի շարք ծրագրերի, մասնավորապես «Պաշտպան հայրենյաց» ծրագրին և տվել հետևյալ գնահատականը. «...ծրագիրը ևս բախվում է արդյունավետության խնդիրների: Չնայած նախատեսված ֆինանսական խթաններին՝ այն հաճախ ընկալվում է որպես լրացուցիչ ֆինանսական բեռ, իսկ անվտանգության ռիսկերը և սոցիալական երաշխիքների սահմանափակ ընկալումը նվազեցնում են դրա գրավչությունը»: Անհասկանալի է, թե ինչի վրա է հիմնվում այս գնահատականը, ում կողմից է այն ընկալվում որպես լրացուցիչ բեռ, հղումները բացակայում են: Կարծում ենք, նման գնահատականի ներկայացումը խիստ սուբյեկտիվ է և չի արտացոլում իրականությունը:

4. Աշխատանքում պաշտպանական անվտանգային ոլորտում իրականացվող մի շարք խնդիրներ քննարկվում են տարբեր աղբյուրների հղմամբ, սակայն աշխատանքն էականորեն կշահեր, եթե իրականացվեին նաև հարցազրույցներ ռազմական փորձագետների, ՊՆ, ԱԺ աշխատակիցների, ՄԻՊ-ի, ՔՀԿ-ի ներկայացուցիչների հետ՝ ոլորտի խնդիրներն առավել համապարփակ ներկայացնելու և ճշգրտությունը պահելու նպատակով:

5. Ատենախոսության մեջ առկա որոշ տեսական և գործնական եզրահանգումների հետ մեկտեղ, աշխատանքի բացթողումներից կարելի է համարել այն, որ հեղինակի կողմից չի մշակվել և աշխատանքում ներկայացվել ՀՀ ԶՈՒ նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների կատարելագործման առաջարկությունների փաթեթ: Փաթեթի ներկայացումը կունենար կիրառական բարձր արժեք և կարող էր իրապես գործուն գործիքակազմ հանդիսանալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտարկումները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու շարադրանքի փոխկապակցված տրամաբանությունը, հեղինակի գիտական պատրաստվածությունը, եզրահանգումները՝ կարծում ենք, որ Սվետլանա Կամոյի Ջիլավյանի «Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմնական մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ԲՊՀ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի 2026թ. հունիսի 11-ի թիվ 8 նիստում:

Վարդան Ասլանյան

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի
Քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ժ/պ

«Փ.գ.թ., ա.գ.թ., դոցենտ Վարդան Ասլանյանի ստորագրությունը հաստատում եմ»:

ԲՊՀ գիտական քարտուղար՝ Հասմիկ Փիլավջյան

Տեղեկություններ առաջատար կազմակերպության մասին.
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
Հասցե՝ ք. Երևան 0002, Թումանյան 42,
Հեռ.՝ (010) 522 020